600.017.12.07.99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 1999 թվականի №17
քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող փոքր ՀԷԿ-երի էլեկտրաէներգիայի սակագների մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի զ) կետը, 20-րդ հոդվածի ա) կետը, 34-րդ հոդվածը և ելնելով Հայաստանի Հանրապետության տարածքում փոքր ՀԷԿ-երի կառուցման գործընթացի կանոնակարգման անհրաժեշտությունից, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից մինչև 2000 թվականի դեկտեմբերի 31-ը տրվող լիցենզիաներով կառուցվող փոքր ՀԷԿ-երի համար մեկ կՎտժ էլեկտրաէներգիայի՝ ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998 թվականի օգոստոսի 28-ի №39 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի» 3.14 կետում նշված առավելագույն սահմանային սակագինը՝ 0.036 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ներառյալ ավելացված արժեքի հարկը:
2. Ընդունել ի գիտություն, որ կառուցվող փոքր ՀԷԿ-երի էլեկտրաէներգիայի արտադրության քվոտա կսահմանվի՝ համաձայն ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998 թվականի օգոստոսի 28-ի №39 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի» 3.14 կետի, քվոտավորման կարգի և լիցենզիայի պայմանների:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքում փոքր ՀԷԿ-երի կառուցման լիցենզիայի օրինակելի ձևը և լիցենզիայով սահմանվող՝ գործունեություն իրականացնելու հիմնական պայմանները (հավելված):
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
նախագահ՝ **Վ. Մովսեսյան**